

ՀՈՒՆԱԲԱՆ ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ՆՐԱ ՄՇԱԿԱԾ
ՆԱԽԱԾԱՆՑ ՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՀՀ ԳԱԱ. ահադեմիկոս Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ

Հնդունված է ասել, որ դասական գրաբարը աղքատ է եղել նախածանց-
ներով և որպես այդպիսին տիպաբանորեն արմատապես տարբերվել է այն-
պիսի լեզուներից, ինչպիսիք են սանսկրիտը և ավեստերենը, հին հունարե-
նը և լատիներենը, հին սլավոներենը և լիտվերենը, ընդհանրապես հնդեվ-
րոպական լեզուների գերակշռող մեծամասնությունը: Վերջիններիս մեջ մաս-
նավորապես հնդեվրոպական նախդիրների հիման վրա մշակվել են մեծաթիվ
նախածանցներ, որոնք ավելացրել են այդ լեզուների արտահայտչական
հնարավորությունները. նախդիրները, միանալով գոյականներին, հանդես են
գալիս որպես բուն նախդիրներ, միանալով բայերին՝ որպես նախածանց-
ներ կամ նախաբայեր (պրեվերբներ): Հնդեվրոպական դասական լեզուների
վիճակն այնպես է, որ միևնույն միավորները հաճախ կարող են հանդես
գալ որպես նախածանցներ և նախդիրներ, մասամբ էլ որպես մակբայներ,
սակայն դրանց կողքին առկա են միևնույն իմաստները այդ երեք կարգերի
համար տարբեր միավորներով արտահայտելու, այսինքն՝ գործառական
տարբերակված համակարգեր մշակելու միտումներ:

Դասական գրաբարում վիճակը հետևյալն է.

1) պահպանվել են նախամասնիկավոր որոշ կազմություններ, որոնց
նախամասնիկները զուգահեռներ ունեն հնդեվրոպական սպասարկու բառերի
և նախամասնիկների մեջ, բայց դասական շրջանում արդյունավետ չեն, և
ներանցով նոր բառեր չեն կազմվում.

ամ- (հմմտ. հ. հնդկ. sa-, ավ. ha-)՝ ամուսին (ուսանիմ), ամուսնիք
(ուսնի, միսնի).

ամր- (հմմտ. հուն. ἀμρ-, ἀμρ-)՝ ամուրջ (ողջ, առողջ).

ամ- (հմմտ. հուն. ἀμ-, ἀμ-)՝ անկողին (կող). Դժվար է ասել՝ այս նա-
խամասնիկն է առկա (հ)ամբռնել, համբերել բառերում, թե՞ սրանց
(հ)ամ-ը գալիս է հ.-ի. *սղ-ից՝ խառնված իրանական ծագման (հ)ամ-
(հան-) ածանցի հետ.

ն(ի)- (հմմտ. հ. հնդկ. ni-, ni-)՝ նիստ (նստիմ), նիսք (նիսք).

ն(ու)- (հմմտ. հ. հնդկ. su-, ավ. hu-)՝ նլու (լու, լուայ «լսեցի»), նմուտ
(մուտ, մտանել). խառնվել է իրանական hu-ի հետ (նգոր):

2) հայերենի հնդեվրոպական ծագման բուն նախդիրները՝ առ, գ-
ընդ, քառ ի (յ-), գ, միաժամանակ հանդես են գալիս որպես նախածանցներ,
բայց, ի տարբերություն հուն. նախդիր-նախածանցների, մակբայական գոր-
ծածություն չունեն և ավելի մեծ չափով են ձևականացել. այս նախդիրների
բառակազմական արժեքը, արդյունավետությունը և տարբեր խոսքի մասե-
րի հետ գործածվելու կարողությունը տարբեր են. հիշյալ նախդիրներից առա-
ջին չորսը առ-, գ-, քն(դ)- (քմ-), (ք)առ ձևերով և ի նախդիր յ- տարբե-

* Այս հոգվածի անգլերեն համառոտ տարբերակը ներկայացվել է 1922 թ. սեպտեմբե-
րին Միլանում (Իտալիա) տեղի ունեցած հայագիտական կլոր սեղանին, որ նվիրված է եղել
հոգարան գալուցին:

րակը համեմատաբար լայն գործածություն ունեն և կարող են հանդես գալ մասնավորապես որպես բայական նախածանցներ (նախաբայեր), ընդ որում զգալի թվով դեպքերում չկա ածանցավոր ու ածանցազուրկ հիմքերի որոշակի հակադրություն, և բացակայում է իմաստային հստակ գործառությունը. հմմտ. առագաստ (ագանիմ), առածիմ (ածեմ, ածիմ), առանձին (անձն), առաւել (աւել-ի). զանցանեմ (անցանեմ), զարդ (արդ), զգալ—զեկ—, (զամ, եկ—), զեղծանեմ (եղծանեմ). բնդարմանամ (արմանամ, զարմանամ), բնդունիմ (ունիմ), բնբռնեմ (բռնեմ). (բ)ստանձնեմ (անձն), (բ)սուգտանեմ (զտանեմ). լյականեմ (ակն), լյանցանեմ (անցանեմ), լյեդիւտեմ (եդիւտ.), ցայգ (այգ), ցանկ (անկանիմ), ցերեկ (երեկ):

Յ) Վերոհիշյալ բուն նախդիրների կողքին հանդես են եկել հնդեվրոպական և ոչ-հնդեվրոպական ծագման նախաբաղադրիչներ, որոնցով կազմվում են նախածանցային արժեքի բառեր՝ իմաստային ավելի հստակ ասարեքակվածությամբ և ավելի լայն գործածությամբ.

բաց(ա)՝ բացարձակ, բացօթեաց.

նամ(ա)՝ (հայ և իրան. ածանցների բաղադրվածք)՝ նամամայր, նամամիտ.

նեռա՝՝ նեռարնակ, նեռագնաց.

նեռ(ա)՝՝ նեռագնաց, նեռահան, նեռամուտ, նեռաբրիտ.

մերձ(ա)՝՝ մերձակայ.

միջ(ա)՝՝ միջախառն, միջամուխ, միջամուտ (լինիլ). հմմտ. նաև միջն(ա)՝՝ միջնաբերդ, միջնառուն, միջնորմ.

(յ)առաջ(ա)՝՝ (յ)առաջակայ, յառաջագետ, յառաջագիր, յառաջադիր, յառաջամիտ.

յեռ(ա)՝՝ յեռագայ. հմմտ. նաև յեռեւա՝՝ յեռեւախալաց, յեռեւա՝՝ յեռեւածեր, յեռեւա՝՝ յեռեւամիտ.

ներբն(ա)՝՝ ներբնածուեռ, ներբնատուն. հմմտ. նաև ներբսա՝՝ ներբսափողմն, ներբսամուտ.

վեր(ա)՝՝ վերակացու, վերաբերու. հմմտ. նաև վերեւա՝՝ վերեւափողմն, վերեւատուն.

ստոր(ա)՝՝ ստորոտ.

տար(ա)՝՝ տարագիր, տարածամ.

փոխ(ա)՝՝ փոխադարձ:

Արդ՝ ինչպե՞ս են վարվել հունարան դպրոցի ներկայացուցիչները հունարենի նախածանցների համակարգը հայերեն արտահայտելիս, ի՞նչ են վերցրել եղածից և ի՞նչ նորություն բերել, ի՞նչն է այստեղ դրական և ի՞նչը՝ բացասական:

Վաղուց է հայտնվել այն կարծիքը, որ Դիոնիսիոս Թրակացու «Ἑξων ἡμετέριον» (սերականական արվեստ) երկի թարգմանությունը եղել է հունարան դպրոցի առաջին գործերից մեկը: Դեռևս 1954 թ. մենք փորձել ենք հիմնավորել այն կարծիքը, որ այդ թարգմանությունը ոչ միայն առաջիններից է եղել, այլև հունարան դպրոցի համար ունեցել է նորմավորող նշանակություն: Այդ առանձնապես ակնհայտ է դառնում, երբ քննում ենք Թրակացու երկի թարգմանության նախադրությանը նվիրված հատվածը և այն համեմատության մեջ դնում հունարեն նախածանցների թարգմանության ժամանակ թարգմանչի կիրառած սկզբունքների հետ:

Ինչպես հայտնի է, այդ հատվածում հունարենի 18 նախադրության դիմաց թարգմանիչը հիշատակում է հայերեն 50 բուն «նախադրություն»-նախածանց (սնախադրեալ յամեն մասունս բանի ըն բարդութեան և բողա-

1 Գ. Զաչուկյան. Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում. Երևան, 1954:

սութեան») և, որ ակնհայտ նորութիւնն է, 3 ետադրութիւն-վերջածանց (սստորդասք)²: Հունական տեքստում նախ բերված են միավանկ, ապա երկվանկ ձևերը:

Հայերեն ճնախադրութիւնները դասավորված են հունարեն տեքստին ոչ լիովին համապատասխան հաջորդականությամբ. եթե միավանկների դեպքում խախտված է միայն *էւ-*ի համարժեքների տեղը, ապա երկվանկների դեպքում խախտումն այնքան մեծ է, որ դասավորութիւնը գրեթե կամայական է թվում: Այս է պատճառը, որ Ն. Ադոնցը հունարեն և հայերեն նախածանցների համապատասխանութիւնների ցանկը կազմելիս այն չի օգտագործել: Սրան միանում են թարգմանչի որոշ անհետևողականութիւններ: Եթե հունարեն տեքստում բերված են միայն ճնախադրութիւն-նախածանցները, ապա հայ թարգմանիչը բերում է նաև այնպիսի ձևեր, որոնք օգտագործվում են միայն որպես ճնախադրութիւններ» և միայն որպես նախածանցներ, որոշ դեպքերում էլ՝ ոչ որպես նախադրութիւններ և ոչ էլ որպես նախածանցներ. կան ընդհանրապես արհեստականորեն անջատված միավորներ (հմմտ. մուշա, զավ): Հունարեն որոշ նախդիրների իմաստներ էլ հավանաբար հստակ չեն տարբերակված (*αυτο* և *περι*, *κατα* և *υπο*):

Թեև մենք նշեցինք, որ Թրակացու աշխատության թարգմանութիւնը նորմավորող նշանակութիւն է ձեռք բերել, բայց ինքը թարգմանիչը նախադրութիւնը նվիրված հատվածը կազմելիս հավանաբար նորմավորման հատուկ նպատակ չի հետապնդել: Այդ երևում է ոչ միայն վերևում ասվածներից, այլև այն բանից, որ նախադրութիւններին նվիրված հատվածում զետեղված միավորների մի մասը ինքն ընդհանրապես չի կիրառել, և, ընդհակառակն, թարգմանութիւն մեջ կիրառել է ճնախադրութիւն-նախածանցներ, որոնք ճնախադրութիւններից ցանկում տեղ չեն գտել՝ փաղ- (*սս-*), տրամ(ա)- (*ծւ-*), այլև միևնույն նախածանցով թարգմանել է հունարենի մի քանի նախածանցներ, ինչպես ընդ- (*էւ-*, *μετα-*, *υπο-*):

1954 թ. մենք փորձել էինք վերականգնել հունարենի ճնախադրութիւնների դիմաց Թրակացու աշխատության թարգմանչի տված շարքերը: Այժմ կատարելով որոշ ուղղումներ՝ դրանք կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

էս—*նեք*

էւ—*նը*, *ըն/ին*

էէ—*արտ*, *ատր* ([°]), *ապ*, *բաց*

սս—*բար*, *բաղ*, *շար*, *շաղ*, *մուշտ*, *զոզ*, *շոկ*, *-կից*, *-որդ* (տեքստում՝ *նաև փաղ*)

քո—*պատ*, *կանուխ*, *վաղ*

քոք—*առ*, *արդ*

ան—*վեր*

κατα—*ըստ*, *խուս*, *ունջ*([°])

οι—*թափ* (տեքստում՝ *տրամ*)

μετα—*զկնի*, *լետ* (տեքստում՝ *նաև ընդ*)

περι—*տար*, *մատ*, *լար*

αντι—*թեր*³, *հակ*, *դեր*, *փոխ*

οπι—*մակ* (տեքստում՝ *նաև ընդ*, *վեր*)

περι—*վասն*, *լաղազս*, *սակս*, *պար*, *կար*([°]), *փաղ*, *բակ*

² Н. Адонц Дионисий Фракийский и армянские толкователи. Пг., 1915, с. 30.

³ Ադոնցի բերած տեքստում՝ *թա*:

αμφι — քող, գալ(°)

απο — տալ (տեղի տալ՝ հաե բաց. տալ)

υπο — լինել, լինիք, ստոր

υπερ — վաղ, վեր, առել

Առանձնացնելով միայն նախածանցական և նախաբաղադրիչային արժեք ունեցող միավորները՝ կունենանք հետևյալ պատկերը.

εν — ներ-

εν, εϛ — տար(ա)-, տղ(ա)-, բող(ա)-

συν — բող(ա)-, չար(ա)-, չար(ա)-, (սող(ա)-), ալիս-կից

-սրդ.

απο — հան(ա)-, վաղ(ա)-

απο — առ-

αυτο — վեր(ա)-

αυτο — բաց, խառն-

αυτο — թափ

μετα — չափ

παρο — տար(ա)-, մտալ(ա)-, լար(ա)-

αυτο — թար(ա)-, հակ(ա)-, դեր(ա)-, փոխ(ա)-

επι — մակ(ա)- (ընդ, վերա-)

περι — պար(ա)-, փոքր(ա)-, բակ(ա)-

αυτο — ցող(ա)-

απο — տար(ա)-

υπο — ընդ, հնչ(ա)-, ստոր(ա)-

υπερ — գեր(ա)-, առել(ա)-

Ի՞նչ սկզբունքներով է առաջնորդվել թարգմանիչը «նախադրություն» — նախածանցների ցանկը կազմելու ժամանակ:

1) Օգտագործել է արդեն գործածություն մեջ եղած նախածանց-նախաբաղադրիչները՝ հազվադեպ գործածականներին տալով սովորական գործածություն՝ և տարբերակներից կատարելով հիմնականում նպատակահարմար ընտրություն:

Սրանց մեջ առաջին հերթին պետք է հիշել առ, ընդ, ըստ նախդիր-նախածանցները:

Երկրորդ հերթին այստեղ տեղ են գտել սովորական արմատական ձևեր, որոնք հրեման հանդիպում են նախորդ հեղինակների մոտ, կամ որոնց բաղադրյալ ձևերը սովորական «նախադրություններ» և նախաբաղադրիչներ են՝ առ (հմտ. առաքել, առաքել), ներ (հմտ. ի ներքե, ի ներքե, ներքե, ալիս ներքե, ներքե, ներքե—Ազաթանգեղոս, ներքե—Ոսկեբերան), վեր (հմտ. ի վերայ, վերեւ—վերադիր, վերադրեմ—Ոսկեբերան) և այլն:

2) Ածանցների սովորական գրական տարբերակների կողքին գործածություն է տվել համապատասխան բարբառային ձևերին:

Ենթ(ա) (ընդ-ի կողքին), փար(ա) (բար(ա)-ի) կողքին:

Թերևս սրանց թվին պետք է դասել նաև առանձին բարբառներում փոխառված ձևերը՝ մակ(ա) (բացբերենից):

3) Բառերից առանձնացրել է, ըստ ժամանակի ստուգաբանական սկզբունքների, նախաբաղադրիչներ, գերազանցապես միավանկ՝ դրանց տալով նախածանցային արժեք. հմտ. մուշտ, զով (հմտ. զովող շրնկեր, գործակից), գալ (հմտ. գալաթ, գալազան, գալան):

4) Հունարեն «նախադրություն»-նախածանցների դիմաց բերել է սովորական գործածության բառեր, որոնք հայերենում այդպիսի գործածություն չեն ունեցել և մասամբ այդպիսի գործածություն չեն ստացել նաև հունարան դպրոցի երկերում. հմմտ. քաղ, խաւն, ունշ, քալ:

Որ Թրակացու քերականության թարգմանչի կազմած «նախադրությունների» ցանկի հունարեն համարժեքների վերականգնումը կարևոր նշանակություն ունի հայ բանասիրության համար, երևում է հետևյալից. հայ գիտնականները որոշ դեպքերում փորձել են հունարան դպրոցի մեջ ուղղություններ և ժամանակագրական շերտեր տարբերել՝ հենվելով հենց «նախադրություն»-նախածանցների վրա, մինչդեռ նշված հատվածին ավելի մեծ ուշադրություն դարձնելու դեպքում նրանց եզրակացությունները այդքան կատեգորիկ բնույթ չէին ունենալ:

Այսպես, Հ. Աճառյանը հունարան դպրոցի մեջ ուղղություններ (գլխորդներ) է տարբերում ըստ նախածանցների գործածության, «Հունարան դպրոցը,— գրում է նա⁴,— ունեցել է, անշուշտ, զանազան դպրոցներ. դրան ապացույց կարելի է հիշել հենց այն հանգամանքը, որ միևնույն հունական մասնիկը մերթ այսպես և մերթ այնպես է թարգմանվում. այսպես, հուն. σὺν լինում է բաղ, շաղ, շաբ, փաղ, վաղ, յաբ. δὲ լինում է տաբ և տրամ, τὰς լինում է յաբ, տաբ, ὅπο լինում է ստաբ և ենթ, ὧν լինում է հակ և դեթ, ἄπο լինում է ապ և բաց, կամ թե միևնույն հայերեն նախամասնիկը ներկայացնում է երկու տարբեր հունական մասնիկ. այսպես, յաբ ներկայացնում է πὰρ և αὖ, տաբ ներկայացնում է παρὰ և ὅα, εἰς թե Աճառյանը խորանար Թրակացու աշխատության թարգմանության «նախադրությունների» համակարգի և թարգմանչի կիրառած սկզբունքների մեջ, նա կտեսներ, որ այստեղ αὖ-ի դիմաց տրված են բաղ, շաղ, շաբ, և գործածված է փաղ, πὰρ-ի համար բերված են յաբ և տաբ, ὧν-ի համար հակ, դեթ և այլն:

Այս նույն ձևով էլ Հ. Մանանդյանի⁵ ժամանակագրական եզրակացությունները ավելի վստահելի կլինեին, եթե նաև նկատի ունենար այս հանգամանքը:

Այժմ ցանկանում ենք մի քանի ընդհանուր դիտողություն անել հունարան դպրոցի վերաբերյալ՝ նրա լեզվական գործունեությունը ավելի հասկանալի դարձնելու և ավելի ճիշտ գնահատելու նպատակով:

1. Անկախ Հ. Աճառյանի կարծիքի մասին վերևում ասվածից, ցանկանում ենք նշել, որ հունարանությունը որպես երևույթ պետք է տարբերել հունարան դպրոցից որպես հունարանության հատուկ նպատակադիր դրսևորումից: Բնականաբար, հունարանությունը չի կարելի դիտել որպես լեզվական տեսակետից միատարր ուղղություն: Դեռևս XIX դարի 70-ական թթ. Գ. Զարբհանյանը տարբերում էր հունարանության երեք աստիճան. «Ուրիշ հելլենարանություն ունի խորենացին, ուրիշ Գյուտ և ուրիշ Դավիթ Անհաղթ: Տեսակ մը հելլենարանություն կա, անանկ նույն լեզվովը զանգված, որ հայու համար անհասկանալի կըլլա: Ուրիշ տեսակ հելլենարանություն մըն ալ, որ թեպետ և հունարան է, բայց հայերեն լեզվի կատարյալ տեղեկություն ունեցողը կրնա աշխատանքով հասկընալ, իսկ երրորդ տեսակը ավելի մոտ է ազգային ոճի և դյուրավ հասկնալի, թեպետ և մեծապես հեռու բուն ազգային մատենագրաց ... ոճուն հստակութենն»⁶: Կարելի է ասել, որ հետագայում բուն հունարան դպրոցի անվան տակ փաստորեն հասկացվում է միայն սրանցից մեկը՝ Զարբհանյանի նշած առաջին աստիճանը, որ հանդես էր

4 Հ. Աճառյան. Հայոց լեզվի պատմություն. 2, Երևան, 1951, էջ 156—157:

5 Հ. Մանանդյան. Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները. Վիեննա, 1928:

6 Գ. Զարբհանյան. Պատմություն հայերեն դպրության, Ա, Վիեննա, 1865, էջ 37:

գալիս գերազանցապես թարգմանությունների մեջ, և որ բխում էր բնագրերը ըստ հնարավորին ճշգրտորեն ներկայացնելու պահանջից: Այս հունարանությունն է, որ առաջնորդվել է որոշակի ծրագրով և հետևել որոշակի նորմաներով կառուցված լեզվի:

2. Մնայած բուն հունարան դպրոցի ներկայացուցիչների՝ թարգմանության մեջ միևնույն սկզբունքների կիրառելու ձգտմանը, այդ դպրոցին պատկանող երկերը բնականաբար միատարր չեն: Այս առումով է, որ Հ. Մանանդյանի՝ ըստ լեզվական չափանիշների հունարան դպրոցի զարգացման երեք շրջան⁷ տարբերելու փորձը, իր բոլոր թերություններով հանդերձ, բավական արդյունավետ է եղել: Սակայն առարկություն են վերցնում Հ. Մանանդյանի, Ն. Ադունցի և ուրիշների ժամանակագրական եզրակացությունները: 1954 թ. մեր աշխատության մեջ մենք հիմնականում պաշտպանել ենք Մ. Արեղյանի եզրակացությունները հունարան դպրոցի՝ V դարի երկրորդ կեսից (և նույնիսկ ավելի առաջ) սկսվելու մասին⁸ և փորձել դրանք հիմնավորել նոր փաստերով⁹:

3. Հուհարան դպրոցի լեզվական ժառանգությունը ճիշտ գնահատելու համար հարկավոր է տարբերակել լեզվի տարբեր կոշմերում կատարված նորամուծությունները, նկատի ունենալ թարգմանությունների ժամանակի պատկերացումներն ու նպատակները և թարգմանվող երկերի բնույթը:

Հունարանությունների մասին խոսելիս հարկավոր է հստակորեն տարբերակել բառակազմության և քերականության բնագավառները: Հունարան դպրոցի ներկայացուցիչների աշխատանքը հիմնականում դրական է եղել բառակազմության, մասնավորապես հայերենի նախածանցների համակարգի մշակման մեջ, և հիմնականում բացասական՝ ձևաբանական ու շարահյուսական նորամուծություններում: Այդ սլաոճառով էլ բառակազմական նորամուծությունները հարատևեցին, իսկ քերականականները՝ ոչ:

Խոսելով հունարան դպրոցի ժամանակի պատկերացումների ու նպատակների և թարգմանվող երկերի բնույթի մասին՝ հարկավոր է նկատի ունենալ, որ նախ՝ այն ժամանակ գրական լեզվի նկատմամբ գոյություն ունեւր ընդհանուր լին այլ վերաբերմունք, բացակայում էր պատմական մոտեցումը, և հնարավոր էր համարվում կամայական փոփոխությունը. երկրորդ՝ թարգմանությունները նկատի չունեին ընթերցողների լայն զանգված, այլ նախատեսված էին ոչ այնքան մեծ քանակի գրադետների և դպրոցական ուսուցման համար, ընդ որում վերջին դեպքում ուսուցիչը միշտ էլ կարող էր բացատրել և մեկնաբանել. երրորդ՝ թարգմանվող երկերի բնույթը պահանջում էր բնագրերը ըստ հնարավորին ճիշտ ներկայացնել հայերեն, որպեսզի հասկացվեն մեկնաբանությունները և մեկնաբանությունների տարբերակները. այս վերջին հանգամանքով է բացատրվում, որ, օրինակ, փիլիսոփայական և քերականական երկերի թարգմանությունները սովորաբար ավելի հունարան լեզվով են, քան այլ երկերինը:

4. Դասական հայերենի և հունարան հայերենի ժամանակագրական սահմանների գնահատման հարցում գոյություն ունի երկու ծայրահեղություն: Վիեննայի Միթթարյանները, տարբերելով ոսկեդարյան հայերենի փուլը և այն հակադրելով հետոսկեդարյանին՝ այդ հակադրությունը հասցրին որոշ ծայրահեղության և բացարձակացման: Այդ բացարձակացմանը զգալի շափով տուրք է տվել նաև Հ. Աճառյանը, որ ոսկեդարյան («Մեսրոպյան») և հետոսկեդարյան հայերենների տարբերությունները հանգեցնում է հիմնականում 18 կետի¹⁰: Երկրորդ ծայրահեղությունը արտահայտվել է այն հետա-

7 Հ. Մանանդյան, նշվ. աշխ.

8 Մ. Արեղյան. Հայոց հին գրականության պատմություն. 1, Երևան, 1944, էջ 101—102.

9 Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 44—53.

10 Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 85—89.

զոտողների մոտ, որոնք հակված են ժխտելու որևէ էական տարբերության առկայությունը V դարի առաջին և երկրորդ կեսերի միջև: Այսպես, Վ. Առաքելյանը, քննելով Հ. Աճառյանի ամփոփած 18 կետերը և բերելով հակառակ վկայություններ, հանդում է այն եզրակացության, որ «V դարի մեր գրական լեզուն մեկ ամբողջական գրական լեզու է: Այս կարճ ժամանակի համար նման շրջանաբաժանումը իրական հիմք չունի, ուստի այն չի կարելի դիտական համարել: Մի դարի լեզվական ողջ հարստության ուսումնասիրությունը ըստ լեզվաոճական քննության չպետք է հիմնվի ժամանակի գործոնի վրա: Ուսումնասիրությունը անհրաժեշտորեն գրական երկերը բաժանելու է երկու հիմնական խմբի՝ ինքնուրույն և թարգմանական»¹¹:

Ի՞նչ կարելի է ասել այս կապակցությամբ:

Առաջին՝ գնահատման դժվարությունները կապված են մասամբ այն բանի հետ, որ գրական լեզուն հաճախ նույնացվում է ողջ լեզվի հետ, հաշվի չի առնվում, որ այնուամենայնիվ այն լեզվի գոյաձևերից մեկն է, որի մեջ ավելի մեծ է ճիշդամտության հնարավորությունը, որտեղ կարող են կատարվել այնպիսի գործընթացներ, որոնք որոշ չափով շեղվում են ընդհանուր միտումներից, մասնավորապես մենք գործ ունենք թարգմանական դրականության հետ:

Երկրորդ՝ վերևում ասվածից բխում է, որ հունաբան հայերենը, որպես գրական լեզվի դրսևորումներից մեկը, չի կարելի նույնացնել ժամանակի ողջ լեզվի հետ: Այս դեպքում ոսկեդարյան կամ դասական հայերենը որպես պատմական փուլ կհակադրվի ոչ թե հունաբան հայերենին, այլ հետդասականին, որի դրական տարբերակի մեջ հանդես է եկել հունաբանությունը իր չափավոր և ծայրահեղ դրսևորումներով:

Երրորդ՝ ոսկեդարյան հայերենի «գլուխի» հեղինակները, խոսելով ոսկեդարյան ու հետոսկեդարյան վիճակների տարբերությունների մասին և վերջին դեպքում հենվելով հատկապես հունաբան նորամուծությունների վրա, բնականաբար, շեղտում են տարբերությունները և չեն խոսում կամ քիչ են խոսում ընդհանրությունների մասին. մինչդեռ, ինչպես ցույց է տրվել և ինչպես նշվեց վերևում, հետդասական շրջանի շատ առանձնահատկություններ իրենց հիմքերն են ունեցել ոսկեդարյան շրջանում: Այնուամենայնիվ գրական լեզվի առուժումը դասական և հետդասական փուլերի, մասնավորապես սրա հունաբան դրսևորման միջև նշանակալից տարբերություն կա: Լիովին բնական է, որ Վ. Առաքելյանը դասական լեզվին վերագրվող առանձնահատկություններ է գտնում Եղիշեի, Փարպեցու, Խորենացու մոտ: Սակայն չպետք է մոռանալ, որ դասական հայերենում հանդիպող որոշ հազվագեղ գործածությունների հունաբան հեղինակները լայն գործածություն տվեցին և գրական լեզվի համար դարձրին սովորական ձևեր, նախածանցավոր կազմությունների մեջ տեղի ունեցավ որակական անցում: Հ. Աճառյանը ճշոր հայկազյան բառգրքում հաշվել է 1793 նախամասնիկավոր կազմություն¹², մինչդեռ սրանց մի շնչին մասն է միայն առկա դասական շրջանում:

Չորրորդ՝ հարկ ենք համարում նշել, որ Վ. Առաքելյանի այն առարկությունը, թե այդքան կարճ ժամանակում լեզուն չէր կարող մի փուլից անցնել մյուսը, պետք է պայմանականորեն հասկանալ. այստեղ գործ ունենք ոչ թե նոր գրական լեզվի ձևավորման հետ, ինչպես հին շրջանից միջինին անցնելիս, այլ միևնույն գրական լեզվի զարգացման փուլերի հետ. քաղաքական, մշակութային և այլ գործոններ հաճախ կարող են գրական լեզվի մեջ զգալի փոփոխությունների հիմք տալ և նկատելի դարձնել անցումը:

11 Վ. Առաքելյան. Դասական և հետդասական գրարարը. — Պատմա-բանասիրական հանդես, 1976, № 1, էջ 271:

12 Հ. Աճառյան. Նշվ. աշխ., էջ 146:

ГРЕКОФИЛЬСКАЯ ШКОЛА И ЕЕ ВКЛАД В РАЗРАБОТКУ СИСТЕМЫ ДРЕВНЕАРМЯНСКИХ ПРИСТАВОК

Академик НАН РА Г. Б. ДЖАУКЯН

Резюме

До формирования грекофильской школы в древнеармянском языке: 1) имелись некоторые непродуктивные приставки (*am-, amb-, an-, n(i)-, h(u)-*); 2) собственные предлоги *at, cc, and, est, i(y-), z* функционировали так же как приставки; 3) было значительное количество несобственных предлогов, выступающих также в качестве приставок. Представители грекофильской школы использовали в качестве приставок: 1) как собственные, так и несобственные предлоги, сделав рациональный выбор между их вариантами и при переводе придавая им определенные значения греческих приставок; 2) диалектные формы некоторых приставок; 3) некоторые слова и формы, имеющие такого употребления. В статье обращается внимание на следующие моменты деятельности языковой грекофильской школы: 1) следует выделить несколько видов грецизированного армянского языка, причем язык представителей грекофильской школы был наиболее грецизированным, следовавшим определенной программе и построенным по определенным нормам; 2) несмотря на это язык представителей грекофильской школы был неоднородным и подвергался некоторым изменениям в течение веков; 3) роль грекофильской школы была в основном положительной в области словообразования и отрицательной в области морфологии и синтаксиса; 4) в качестве крайностей следует оценить как противопоставление классического древнеармянского постклассическому — с фактическим отождествлением последнего с языком авторов грекофильской школы, — так и отрицание существенных различий между ними.

THE HELLENIZING SCHOOL AND ITS CONTRIBUTION TO THE ELABORATION OF THE SYSTEM OF PREFIXES IN ARMENIAN

Academician of the National Academy of Sciences of Armenia G. B. DJAHUKIAN

Summary

Before the Hellenizing school was formed, the old Armenian language had: 1) some non-productive prefixes (*am-, amb-, an-, n(i)-, h(u)-*), 2) proper prepositions *at, cc, and, est, i(y-), z* which functioned also as prefixes, and 3) a considerable number of non-proper prepositions which also function as prefixes. The representatives of the Hellenizing school used as prefixes: 1) both proper and non-proper prepositions having made a rational choice between their variants and having attached to them definite meanings from Greek prefixes when translating, 2) the dialectal forms of some prefixes, and 3) some words and forms not normally used as such.

While appreciating the activity of the Hellenizing school, the author of this paper emphasizes the following: 1) some types of hellenized Armenian should be distinguished, because they were the most systematized according to a definite programme and standards, 2) in spite of this fact, the language of other representatives of the Hellenizing school was not homogeneous and underwent some alterations over the centuries, 3) on the whole the role of the Hellenizing school was positive in word-building and negative in morphology and syntax, and 4) we should consider as extreme points of view both the strong opposition by many scholars of the classical Armenian to the post-classical Armenian (when the latter was identified with the language of the authors of the Hellenizing school) and the rejection by others of essential differences between them.